

Ս Կ Ե Ս ՈՒ Բ Ը

(ԳԻՒԼԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ)

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

I

N. գիւղացի Ոսկաննոց թամամը մի Կարի է, որ այրիացել է, քնալով իր տանը մենմենակ: Թամամի միակ մխիթարութիւնը այժմ նրա մինուճար որդի Գէորգն է, որն ահա Կարի է օտարութեան մէջ է գտնուում: Խեղճ Ոսկաննոց Կարապետը որդու աշխատանքի պատշաճ արդէն վայելել էր: Նա իր կեանքի վերջին Կարիներում, որ շարունակ տկար էր, մի փափագ միայն ունէր. արժանալ իր Գէորգի տեսութեանը, պսակել նրան և յետոյ մեռնել, բայց երկարատեւ և մաշող հիւանդութիւնը չարագեց Կարապետի կամքը և խեղճը մեռաւ՝ չհասնելով իր մտերազին:

Ամուսնու մահից յետոյ Թամամը կէս Կարեաց ընթացքում զանազան ակնարկներով ու մտթ ձեւերով հազիւ կարողացաւ յայտնել որդուն, թէ նրա հայրը վախճանւել է:

— Խեղճ է երեխաս, ասում էր նա ամեն անգամ իր գիր գրող տիրացու Մեսրոբին, — որդիս յանկարծ կը լսի, կը վախենայ ու իր մէջ ցաւ կը գոյացնի:

Վերջին նամակում, որտեղ Թամամը ուղղակի յայտնում էր որդուն հօր մահը, մի առ մի նկարագրել էր Կարի նրա ցաւը, մահաւան օրը, հոգին աւանդելու րոպէն, թաղումը, ժամ պարարագը և վերջացրել էր նամակը հետեւեալ փողերով. «Հօրդ գերեզմանի վրա, որդիս, քար չեմ քաշել Կարի. լաւ քար չգտնեց, մօտս

էլ փող չկար: Էնպէս մնացել է. պահել եմ, որ դու գաս, նորից պատարագ անել տաս և ժամից յետոյ քո ձեռքով առօք-փառօք մի լաւ քար քաշել տաս հօրդ գերեզմանի վրա և որդիական պարտաւորութիւնդ կատարես:

Կարդալով մօր նամակը, Գէորգը դառնապէս լաց եղաւ, ցաւեց, որ հայրը շարժանացաւ նրա առևտրական ծրագիրների իրագործմանը, որը Կարապետին մեծ ուրախութիւն կը պատճառէր: Գէորգը խղճաց և մօրը, որ մնացել էր մենմենակ, և վճռեց նրա սիրոյն համար անպատճառ դիւղ վերադառնալ: Նա իր համագիւղացի մի երիտասարդի հետ ընկերովի խանութ ունէր X. քաղաքում: Իր հաշիւները ընկերոջ հետ պարզելուց և խանութը նրա խնամքին յանձնելուց յետոյ, Գէորգը ճանապարհեց դէպի գիւղ, խոստանալով ընկերոջը հինգ-վեց ամսից յետոյ վերադառնալ:

Աշունը նոր էր մտել: Եղանակները դեռ պարզ էին և մեղմ: Գէորգը ճանապարհին ցրտի կամ անձրեւի տակ չընկաւ, թէ և սաստիկ նեղութիւն կրեց Զանգեզուրի լեռնոյ ճանապարհներում և բաւականին յոգնած ու ջարդած գիւղ հասաւ:

Քամամը որդուն տեսնելուն պէս նրա վզովը փաթաթեց, յիշեց ամուսնուն, որ «Գէորգ ջան» կոչւելով հոգին աւանդեց, և լաց եղաւ: Արտասուքը խեղդեց և որդու ձայնը. նա ոչինչ չկարողացաւ արտասանել և դառն կերպով հեկեկաց: Ազգական և հարեան կանայք ու տղամարդիկ այցելութեան եկան: Սրանք սկզբում լաց էին լինում և ապա մխիթարում Գէորգին: Յաճախ արտասուող մօրն էլ նախափում էին՝ ասելով.

—Քամամ բաջի, դէ հերիք է ախր. պա որդուդ չես խնայում. ախր քեզ տեսնում է, ինքն էլ լաց է լինում: Փառք Աստուծոյ, տղադ սաղ-սալամաթ եկել է տեղ հասել:

Սգւորները կամաց-կամաց հանդարտւում էին: Քիչ յետոյ սկսեց սովորական զրոյցը: Ամենքը իրանց օտարականների մասին տեղեկութիւններ էին հարցնում: Գէորգը ամեն մէկին գոհացուցիչ պատասխաններ էր տալիս և յայտնում թէ ումից է նամակ բերել: Եկողը քիչ նստում էր, իր հետաքրքրութեանը լիութիւն տալիս և ապա, շնորհակալութիւն յայտնելով, հեռանում: Քամամի աղջիկը, որ Գէորգից տարիքով մեծ էր և վաղուց էր մարդու գնա-

ցել, եռացող հեշտաեռոյն էր կացել: Նա թէյ էր պատրաստում և բաժանում հիւրերին: Հեշտաեռը շարունակ պատրաստ՝ կանգնած էր պատուհանում, որովհետեւ ամեն մի այցելուի այդ օրը պիտի հիւրասիրէին թէյով:

Բաւականին ուշ էր, որ վերջին հիւրերը հեռացան և այնուհետ միայն յոգնած, ջարդած ծանապարհորդը կարողացաւ անկողին մտնել ու հանգստանալ:

Այցելութիւնները հետեւեալ առաւօրեան ևս շարունակուում էին: Ամենից առաջ ուղղակի ժամից եկաւ տէր-Սարգիսը և հոգոց ասաց: Գէորգը նրա մաշտոցի վրա մի մանէթ դրեց: Տէր-Սարգսի դէմքը փայլեց ուրախութիւնից: Նա մի ըրւովա արաղ խմեց, շնորհակալութիւն յայտնեց և գոհ սրբով հեռացաւ այդ փեղից:

—Այ տէրտէր, սպասիր՝ չայ բերենք՝ խմիր,—ասաց Քամամը:

—Օրհնես դու, այ Քամամ,—պատասխանեց տէրտէրը ծիծաղելով.—չայը ի՞նչ եմ անում. դա ջահիլների բան է. իմը արաղն էր, որ խմեցի. Սաուած պահի մեր օտարական փղերանց. էլի հէնց դրանք են տէրտէրի զաւրը (արժէքը) իմանում...:

Այդ օրը այցելութիւնների շրջանը վերջացաւ և այնուհետ Քամամը նւիրեց իր անձնական հոգսերին: Այդ հոգսերից ամենակարեւորը որդուն ամուսնացնելու հարցն էր:

—Հազիր փղաս եկել է, մտածում էր նա,—պիտի շուտ անեմ պսակեմ. մինչ երբ առանց կնիկ մնայ. երեսուն տարեկան է. պա երբ պիտի որդի ունենայ, որ փղան: Չայ հօրը ջանին հասնի: Պիտի պսակեմ, ով գիտէ ինչ կը պատահի...

Քամամը մի քանի անգամ ակնարկներ արեց դրա մասին իր որդուն, որպէս զի իմանայ նրա տրամադրութիւնը: Որդին իրան միշտ չհասկանալու էր դնում և խոյս էր տալիս այդ հարցից, թէև երեկոները երբեմն գնում էր իր հօրեղբօր կնոջ մօտ և նրա առաջ բաց անում իր սրբինը. մօրից ամաչում էր:

—Սողոմէ ազի, ասում էր Գէորգը.—պսակում էք ինձ՝ պսակեցէք, շուտ արէք, թէ չէ կը գնամ օտարութիւն, էլ ինձ ձեր ծանկը չէք գցիլ. ճշմարիտն եմ ասում, էլ ոչ կը գամ և ոչ էստեղ հարսանիք կ'անեմ: Դու ինձ ասա. ով սիրուն և խելօք աղջիկ ունի:

Սողոմէն նրան մի քանի աղջկերանց անուններ էր ցուել և

Գէորգը կարողացել էր բոլորին էլ ջրադեղից վերադառնալուց տեսնել: Հինգ աղջկայ մէջ Գէորգի աչքը միայն Քաթոսենց Հայրապետի աղջկան՝ Սաթենիկին էր կտել. և նա արդէն շրապում էր հարսանիքն ու նշանադրութիւնը միաժամանակ կատարել: Գէորգը Սողոմէին մի քանի անգամ խնդրել էր, որ սա միջնորդէ և մօր հետ դրա մասին խօսայ: Մինչև որ Սողոմէն կը կատարէր Գէորգի խնդիրը, Քամամը մի օր համբերութիւնը հաղած դարձաւ որդուն և ասաց.

—Այ որդի, ախր պա հենց պիտի պարզ ասեմ, որ հասկա՜ նա՞ս. դէ դու, փառք Աստուծոյ, երեսուն տարեկան պղամարդ ես: Կնիկ տանելուդ ժամանակը անցել է. էլ պիտի սպասես: Ես մենակ եմ, ինձ ձեռք է հարկաւոր, էս պունը պահող է հարկաւոր. ես առաջւայ ոյժն էլ չունիմ. պառաւել եմ: Մի հարս բեր էս պունը, ես էլ ուրախ լինեմ, փափագս առնեմ, դու էլ: Խօսմ չես սպասելու, որ ես էլ մեռնեմ, յետոյ հարսանիք անես:

—Ձէ, ագի, խեղճ չես մեռնես. հարսանիքս էլ կը տեսնես, չլա թոռն էլ ես տեսնելու:

—Պա Երբ, այ որդի, պա ինչի ես տաղ արել, իսկի բան չես խօսում: Դէ հարսանիք անելու լաւ ժամանակ է. ամեն ինչ տաններս պատրաստ. ասա, որ ես իմ բանը իմանամ, զնամ հիմիկանից մէկ աղջկայ նշան անեմ, որ ձեռքիցս դուրս չգայ:

—Ագի, ես մի աղջիկ հաւանել պրծել եմ. զնա մատանին տուր, ասաց Գէորգը՝ ամաշելով և ծիծաղերես:

Նրա դէմքը շառագունեց: Քամամը զարմանքով և հեղաբերութեամբ աչքերը որդու աչքերին յառեց:

—Ո՞ւմ աղջկանն ես հաւանել, որդի. հարցրեց նա արագաշունչ:

—Քաթոսենց Հայրապետի աղջկանը. գեղեցիկ, առողջ աղջիկ է, ինքն էլ շնորհքով:

Քամամը պահ մի փնաց քարացած: Նա իր բութ բերանին դրաւ և վիրաւորանք, նախադիւնք ու զարմանք արտայայտող եղանակով բացականչեց.

—Այ տղայ, էդ էր պակաս: Պա էդ Երբ հաւանեցիր: Իսկի ինձ հետ մի օր չես նստել, խորհուրդ չես արել, թէ այ մէր, ես

ուզում եմ պսակեմ, թէ խորհուրդ ես տալիս, թէ աղջիկ կայ, որի աղջիկն է լաւ, դու որին ես հաւանում... Ախր ես քո մէրն եմ. աղջիկը որ քո կինն է լինելու, իմ էլ հարսն է դառնալու: Պա ես թաթոսեանց աղջկանը հարս կը բերեմ ինձ համար. խելքդ որտեղ է:

— Ինչու, ազի, ես տեսել, հաւանել եմ. Սողոմէ ազին էլ է գովում:

Գէորգը հասկացաւ, որ հօրեղբօր կնոջ անունը չպիտի տար մօր մօտ, բայց արդէն ուշ էր:

Սողոմէ ազին, գոչեց թամամը. — նրա լեզուն օձ կծի... Նրա բաները կը լինեն, հաւատա, որ քեզ գլխից հանել է... Էս է էլի, էս է իմ բախար. որդին իմը, ինձ ոչինչ չի ասում, գնում է հօրեղբօրկնոջ հետ խորհուրդ անում, նրա հետ աղջիկ ջոկում: Հողը իմ գլխին էլ, իմ բախարի վրան էլ...

Թամամի շրթունքները դողդողացին, աչքերը լցեցին արտասուքով և նա այլ ևս չկարողացաւ շարունակել իր բողբոջը:

— Այ ազի, թէնու ախր լաց ես լինում. Սողոմէ ազին մեզ խօսմ ուրիշ չի. էլի թող ամեն բան քո քէնովը լինի: Իզուր ինչի ես լաց լինում:

— Ձէ, միենոյն չի, պատասխանեց թամամը՝ արտասուքը սըրբելով. — ես քո մէրն եմ. առաջ ինձ պիտի ասես, ես պիտի աղջիկ ջոկեմ. դէ որ ուրիշի հետ խորհուրդ ես արել պրծել, էլ ինձ ինչի ես խօսցնում:

— Այ ազի, չեմ իմանում դու ինչ բնաւորութիւն ունես. եթէ ես էդ իմանայի, պա քեզ չէի ասիլ. ամաչում էի, ինչ թաղցնեմ... Էլի դու քո խօսքը ասա, քո կամքը յայտնիր:

— Թաթոսեանց Հայրապետի աղջկանը մտքիցդ հանիր, ասաց թամամը կտրակի. — նա լաւ աղջիկ չի. համարձակ է, մեծի պատիւ չի հասկանում, ամեն մարդու հետ համարձակ-համարձակ խօսում է. սոսնձ գլխաբաց է լինում, կտուր է դուրս գալիս գլխաբաց... Ձէ, ամենից լաւը Փիրումեանց Ներսէսի աղջիկ Գոհարն է. սիրուն, խոնարհ և հնազանդ աղջիկ է: Նրան բեր ինձ համար հարս, եթէ ուզում ես մօրդ ուրախ պահել:

— Ազի, որ Սաթենիկը գլխաբաց է կտուր դուրս գալիս, էդ

ուչինչ չի նշանակում. մեծի պատիւը ճանաչելը դրանից չի կախ-
ւած. անհաշտ, խռովարար և անղգամ հարսը էդպէս էլ կը մնայ,
թէկուզ քթկալը միշտ բերանին պահես ու երեսը քողով ծած-
կես: Սեր կնանիքն էլ կամաց-կամաց պիտի նմանեն քաղաքացի
կանանց. ես շատ ուրախ եմ, որ Սաթենիկը գրել-կարդալն էլ
գիտէ:

— Զէ, չէ, որդի. էդպէս հարսը ինձ հարկաւոր չի. դու ինձ
լսիր. էսօր Գոհարին տես. կը տեսնես ու կը հաւանես:

— Լաւ, պատասխանեց որդին կորակի, չկամենալով երկարա-
ցնել խօսակցութիւնը. — կը տեսնեմ:

Գէորգը մօր խօսքը վաչր չգցելու համար թէև Գոհարին էլ
տեսաւ, բայց իր վճռին մնաց հաստատու Սակայն ինչպէս յայտնէր
դրա մասին մօրը: Անցած խօսակցութիւնից նա գիտէր, թէ որ-
պիսի փոթորիկ պիտի բարձրացնէր պառաւը, լսելով նրա մերժումը:
Հարկաւոր էր մի միջնորդ, որ համոզէր մօրը՝ որդու առաջարկու-
թիւնն ընդունելու: Դրա համար ամենից յարմարը գիւղի քահա-
նան էր, և Գէորգը իր ցաւը տէրտէրին յայտնեց:

— Ի՞նչու է թարսել թամամը, ասաց տէր Սարգիսը. ինչո՞ւ
սիրտդ կոտրում է. շատ նհախ է անում, որ հակառակում է: Ես
նրան կը տեսնեմ և հետը կը խօսեմ: Միայն դո՛ւ ղոչաղ կաց, Գէորգ,
հաւանած աղջկանդ ձեռքից բաց մի թող և հարսանիքդ շուտ գլուխ
բեր: Մի հատ փաստնոց պիտ առնեմ քեզանից ու յետոյ պսակեմ,
աւելացրեց քահանան ախորժալի ծիծաղով. — քո լսելքը ո՞ր-
տեղ է...

— Դրանք հեշտ բաներ են, տէրտէր. դու մօրս համոզիր, որ
մէջ տեղ սրտնեղութիւն չլինի:

Նրանք բաժանւեցան: Հետեւեալ օրը տէր Սարգիսը եկաւ Թա-
մամի մօր: Գէորգը տնից հեռացել էր դիտմամբ:

— Ողջոյն քեզ, Թամամ, ասաց տէր-տէրը՝ ներս մտնելով:

— Օրհնեմ տէր. համեցէք, նստիր, տէրտէր, ասաց Թամամը՝
ողքի կանգնելով: Նա այնքան կանգնած մնաց, մինչև որ քահանան
նստեց:

Քիչ դէս ու դէնից գրուցելուց յետոյ տէրտէրը ուղղակի հար-
ցին անցաւ:

— Թամամ, լսել եմ որդադ ուզում է Հայրապետի աշջկանը տանի, դու հակառակում ես. ի՞նչու էդպէս բան ես բռնում, որդիքէֆին կպչում:

— Ո՞վ քեզ ասաց, տէրտէր. անցած օրին մի խօսակցութիւն ունեցայ որդիս հետ, հիմա ամեն ինչ քո ակամջին է հասել: Մի ասա տեսնեմ ո՞վ է քեզ ասել:

— Քո ի՞նչ գործն է. ես միայն եկել եմ քեզ խորհուրդ տալու, որ դու հակառակես: Տղադ էն աղջկանը սիրում է, դու կարող ես նրան զօրեւ, թէ չէ, էս աղջկանը սիրիր: Զի կարելի. խռովութիւնից, սրտնեղութիւնից բացի ուրիշ բան չի դուրս գալ մէջ տեղ:

— Լաւ ես տեսի, տէրտէր, բայց դէ Եսրէ էդպէս չի, հարսը իմն է, իմ տան համար է. որդան կարող է էս աղջկայ, էն աղջկայ վրայ աչք ունենալ, բայց ջոկողը ես պիտի լինեմ. հարսը իմ սրտովն էլ պիտի լինի:

— Սխալ ես խօսում, Թամամ. քո պարտքը կը լինի հարսին խրատել, բան սովորեցնել, բայց աղջկայ ընտրութեան մէջ դու շատ քիչ պիտի խառնես. դու կարող ես միայն ճշմարիտ տեղեկութիւններ տալ որդիդ հաւանած աղջկայ մասին, ուրիշ ոչինչ. մնացածը նրա քէֆին թող: Մեր եկեղեցական օրէնքը էդ է պահանջում: Մեղք բան է...

— Ի՞նչ մեղք...

— Ախր բանը նրանումն է, որ քեզ համար լաւ հարսը կարող է որդիդ համար վատ լինել. նա կարող է հաւանել, չսիրել, և որ նրան զօրես՝ մեղքի տակ կընկնես:

— Ի՞նչու չպիտի հաւանի. եթէ որդան իմն է, ինձ պիտի հնազանդ լինի, իսկ եթէ չէ, ինքը գիտէ:

— Դու էլի քո ասածն ես ուզում առաջ տանել, Թամամ, բարձրացրեց իր ձայնը քահանան. բայց եթէ մի քանի բաներից տեղեկութիւն ունենաս, մի քիչ խոր մտածես, կը տեսնես, որ դու սխալ ես. հարսը բերիր քո ուզածը և յետոյ տեսար, որ որդադ ու իր կնիկը սաղ չեն դալիս. ամեն օր կուլ, ամեն օր սրտնեղութիւն. քիչ ենք տեսնում մեր չորս կողմը. ի՞նչ կ'անես:

— Ինձ ու իմ ողորմած հոգի մարդուն որ պսակեցին, շատ էին մեր կամքը հարցնում. պա ի՞նչու սիրով էինք:

—Դա պատահուներ է, բախտից է: Ամենքը խօմ ձեզ նման չեն լինիլ: Մէկ էլ պիտի իմանաս, որ փղաղ քաղաքում մեծացած մարդ է, էնտեղի սովորութիւնները վերցրած կը լինի. կը զօրեւ, նա էլ կը նեղանայ բեզ վրայ և կ'ասի. չեմ ուզում պսակել, ես էտրեղ հարսանիք չեմ անում: Բնէ կ'անես: Զահիրը թոււնդ կը լինի. լաւ միտք արա:

—Թող գնա, Բնէ անեմ: Դէ որ էդքան քարասիրտ կը լինի ու մօր սուտ կաթը կը մոռանայ, էն ժամանակ Բնէ պիտի արած. երեւի Ասուած ամեն ինչ ինքը կը դատի և միեւնոյն էլ նրա առաջը կը բերի:

—Մէկ էլ պատահում է, Թամամ, որ փղան, եթէ ծնողները հակառակում են, գնում իրան սպանում է. էս էլ մրածիր:

—Գլուխը քարերով կը փայ իմ փղան, ու էդպէս բան անիլ խի, ես նրա մէրն եմ, նրան թշնամութիւն խօմ չեմ անում, որ գնայ իրան սպանի. ես նրա լաւն եմ ուզում:

—Եւ մէ որդուդ լաւն ես ուզում, նրա սիրած աղջիկը բեր:

Նրանք լռեցին: Տէրութեը էլի մի քանի խորհուրդներ սուա ու վերկենալով Կեղից՝ դուրս եկաւ: Թամամը Կեսաւ, որ Կա փղաղի գործն է: Իր առաջ լուրջ հակառակութիւն և դիմադրութիւն կար: Վարդանալու էր արդեօք իր ուղածին հասնել, թէ ամենայն ցաւօք սիրտի խոնարհէր որդու կամքի առաջ: Այս միտքը սկսեց անհանդարտացնել Թամամին: Ի՞նչպէս թողնել Փիրումենց Ներսէսի աղջկանը, որին վաղուց իր հարսնացուն էր համարում: Ի՞նչպէս այնուհետ նա Ներսէսի պառաւ մօր՝ Սանդուխտի հետ նստի խօսալսել չի կարող նրա երեսը դուրս գալ: Զէ որ Սանդուխտը քանիցս նրան ասել է.

—Թամամ, թոռանս փալու եմ փղիդ:

Իսկ Թամամը պատասխանել է.

—Շատ լաւ, բաժինքը հիմիկանից պարտասիրի:

Եւ այդպէս շարունակել են իրանց զաղպնի ինամութիւնը: Բայց միշտ. ամեն ինչ թարսում, խառնում է, բարեկամութիւնը աւերում: Պա Ասուած վեր կ'առնի, որ նա իր հասակակից կնկայ թուանը թողած՝ գնաց Հայրապետի աղջկանը փանի. Հայրապետի տունը ո՞վ է գնացել, նրա կնկայ հետ ո՞վ է բարեկամութիւն արել:

Ստենք էդ էնքան էլ մեծ բան չի. ցաւը նա է, որ Սաթենիկը համարձակ աղջիկ է. ինչեր չեն պատմում նրա մասին. Կուն մի զոնաղ (հիւր) գաջ՝ ջահիլ կամ ալեոր՝ տեսար գլխաբաց եկաւ բարեւասաց և ձեռք տուաւ: Էդ աղջկայ սազող բան է: Մեր սանամէր Նաշխունը մի օր Հայրապետի տանն է եղել. մի բանի վրայ խօսք է բացել և մեր սանամէրը սկսել է մի աղջկայ մասին վար խօսել. Սաթենիկը տեղից վեր է կացել և Նաշխունին կպել. «ամօթ քեզ համար, ասում է, մեծ կնիկ ես, եկել էստեղ բամբասանք ես անում. բոլոր ասածներդ էլ սուտ են. Նւարդը իմ ընկերուհին է, նրան լաւ եմ ճանաչում: Մեծ կնիկ ես, անարդար բամբասանքներ ես անում: Պա սա լաւած բան է. խոնարհ աղջիկը էսպէս բաներ կը խօսան: Սխր ես նրան ինչպէս նշանեմ որդիս համար:

Այսպիսի մտածմունքների մէջ էր ընկղմած թամամը մի քանի օր շարունակ, իր համար մեծ դժբախտութիւն համարելով որդու վարմունքը: Նա տխուր էր և մտախոհ:

Գէորգը նորից խօսակցութիւն ունեցաւ մօր հետ: Մօր հակառակութեան վրայ այս անգամ նա փոքր ինչ զայրացաւ և բարկացած՝ մի քանի սպառնալիքներ ասաց:

Թամամը լաց եղաւ և «ինչ ուզում ես արա՝ ասելով, հեռացաւ մի կողմ:

Գէորգը կանչեց քրոջը, հօրեղբորկնոջը, ազգականներից մի քանիսին և նրանց դիմեց որ համոզեն մօրը: Ամենքը փղաջի կողմն էին: Երկար խօսակցութիւնից չեմոյ կարելի եղաւ վերջապէս առնել թամամի համաձայնութիւնը: Այնուհետ թամամը նշան պարաւ Սաթենիկի համար և խնամիները հարսանիքի պատրաստութեան կայան:

II

Հարսնացուն մի սիրուն, համեստ և բարեսիրտ աղջիկ էր: Աշխարասէր էր, բայց ծանր գործող: Եռանդով և հետաքրքրութեամբ էր վերաբերում դէպ տնային գործերը: Նա ձգտում էր միշտ նոր բան սովորել և այդ-պիսով թէ երբ չմնալ իրանից շնորհքով ընկերուհիներից և թէ գերիշխել իրանից թոյլերի վրայ: Տասն և վեց տարեկան աղջիկ էր Սաթենիկը, և արդէն դիտէր սպիտակեղէն

ձևերն ու կարելը: Դերիա ձևելը նոր էր սովորել: Ձեռքի կարը շատ գեղեցիկ էր. տեսնողը կ'ասէր մեքենայով է կարած: Այդպիսի մատներ ունէր Սաթենիկը: Տնտեսութեան մէջ հմուտ էր. մայրն էր այդպէս կրթել: Սաթենիկը համարձակ և ազատ աղջիկ էր համարուում գիւղում: Իւր այդ յատկութիւնների շնորհիւ նա էր վայելում կանանց և մանաւանդ պառաւ կանանց համակրանքը: Նա գեղջկուհիների աչն պարզ հոգիներիցն էր, որոնք իրանց բնածին և սիրուն հակումների շնորհիւ պարրաստ են ընդգրկելու այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, ճշմարիտ և գաղափարական: Նրանք պարրաստ են իրանց շուրջը փռած խաւար մթնոլորտի երեսն ելնելու. հարկաւոր են միայն բարեյաջող պաշտաններ— և զիւրը իր ծոցից դուրս կը բերէ բարոյապէս աւելի մեծ արժանաւորութիւններով օժտած կանայք քան քաղաքը:

Սաթենիկը իր համարձակութեամբ և ազատութեամբ պարտական էր երկրասարդ Դրւարեանին, որ նրանց հարեանն էր և սովորում էր հայոց թեմական դպրոցներից մինում: Դրւարեանը ամեն ամառ գիւղ էր գալիս: Տղամարդկանց մէջ նա քիչ էր լինում և մեծ մասամբ տանը վայր ընկած՝ ընթերցանութեամբ էր պարապում: Այդպիսով նա առիթ էր ունենում շփուել կանանց հասարակութեան հետ և յաճախ խիստ քննադատութեան ենթարկել այդպեղ տիրող հնացած սովորութիւններն ու կարծիքները: Դրւարեանը շարունակ ծաղրում էր կանանց նախապաշարմունքները, նրանց սխալ ու նեղ հայեացքները կնոջ դիրքի մասին և շարունակ քարոզում էր, թէ կինը տղամարդու հետ հաւասար իրաւունքներ պիտի ունենայ: Պառաւ և միջահասակ կանայք նրան գիտէին համարում և լուրջ զինւում էին Դրւարեանի դէմ միայն այն դէպքում, երբ վերջինս նոյն մտքերը աւելի եռանդով քարոզում էր ջահիլ հարսներին և աղջկերանց: Սաթենիկի հետ նա յաճախ էր տեսնում, մանաւանդ ամառանոցում. նրանց օբաները դուռ դուռ էին նայում: Եւ օգտւելով առիթից նա շարունակ աշխատում էր այդ աղջկայ միջի աշխարհը լոյսի նոր ճառագայթներ մտցնելու: Սաթենիկին նա զրել կարդալ սովորեց. նրա համար ընթերցանութեան գրքեր էր բերում: Կարդացածի մասին հարցնում էր և իր կողմից էլ բացատրութիւններ տալիս: Սաթեն-

նիկի մայրը սկզբներում դէմ էր այդ բանին և զլխաւորապէս նրա համար, որ չկը խօսացին: Սակայն տղան ուշադրութիւն չէր դարձնում: Եւ կինը շարունակ տեղի տալով տղայի ալիքներին՝ ինքն էլ ընտելացաւ նրա քարոզներին և գործին:

Ուսումը և Գրեալեանի յաճախ յարձակումները կանանց հին հայեացքների դէմ այն ազդեցութիւնը ունեցան Սաթենիկի վրայ, որ նա կորցրեց իր հաւատը դէպի գիւղական կնոջ համար հաստատուած սովորութիւնները և նոյն իսկ մասամբ զիտակցում էր դոցա խելացի հիմունքներից զուրկ լինելը...

Ուրախ էր Սաթենիկը, որ իրան նշանել էին: Ամուսնական կեանքը իր բարդ կողմերով մութ, շար մութն էր նրա հասկացողութեան առաջ, բաց և այնպէս նա երջանիկ էր, որովհետեւ մեծ շնորհ էր համարում այն, երբ աղջկայ համար փեսացու է գտնուում: Բացի այդ—տեսէք թէ ով էր Սաթենիկի փեսացուն. Ոսկանենց Գէորգը, որ օտարութեան մէջ էր մեծացել, քաղաքում խանութ ունէր և հարուստ էր: Նա հագնւած էր քաղաքացու նման, արծաթէ և ոսկեջրած դօրին մէջքին, ժամացոյցի շղթան էլ կըրծէին կախ արած... Երջանիկ էր Սաթենիկը և իր ծնողաց ուրախութեամբ. որքան մթնած են լինում ծնողաց դէմքերը, երբ նրանց աղջկանը ուղող չի լինում. որքան տանջում է խեղճ աղջկայ սիրտը, երբ նա զգում է, որ ինքն է ծնողաց տխրութեան և անբաւականութեան պատճառը, ինքն է ամբողջ տան ծանրութիւնը և որ եթէ նա գետնին մնալու լինի՝ իր դոյութեամբ և բախտով տան վրայ մի արատ պիտի բերէ: Ի՛նչպէս չուրախանալ այժմ:

—Ի՛նչ կը լինէր, բեզ մարաղ, Ասուած, ասում էր ինքն իրան Սաթենիկը.—որ իմ փոքր քոյրն էլ իմ հասակին հասնելուն պէս էսպիսի մի բախտի արժանանար:

Եւ նա մտածում էր իր նոր և մօտազայ դրութեան մասին: Ամուսնական կեանքի մութ, վարագոյրի ետեւ թաղւած, բացխորհրդաւոր և հրապուրիչ գաղտնիքը ալեկոծում էր Սաթենիկի հոգին և պաշարում նրան քաղցր ու դիւթական ցնորքներով: Միտքը անցնում էր և այն տան վրայ, որի հետ նա կապելու էր իր կեանքը և նրա ուրախութիւնը աւելանում էր մի բանով ևս:

—Մի սկեսուր, «ինքը» (Գէորգը), մէկ էլ ես,—մտածում էր

Սաթկնիկը. — ոչ փեղբ կայ և ոչ փեղբակին, որ խռովութիւններ պատահեն, ջոկենք: Գլուխս քարշ՝ իմ գործին կը կենամ և ոչ ոք ինձ չի խանգարիլ: Սրանից էլ լաւ բան: Մեր հարեան Մելքումի փունը էն ինչ է. երկու փեղբակին օր չի լինում, որ իրար հետ կռիւ չանեն, իրար որդի չթաղեն: Ասեմք դա մարդուս՝ իրանից է, բայց էլի եթէ դու լաւ ես, իսկ ընկերդ վատ, էն ժամանակ ինչպէս կառավարես: Եսպէս լաւ է. ոչ ոք չի խանգարիլ: Համ էլ նշանաճս քաղաքում մեծացած փղամարդ է. կ'ուզի, որ քաղաքացու կնկայ նման ազատ լինեմ: Ի՞նչու պիտի ես անխօս մնամ մեր ազգականների մօտ. ի՞նչու ես իբր հարս առանձին պիտի հաց ուտեմ, երեսս մի կողմ դարձրած, որ սկեսուրս չտեսնի. ինչու գլխիս սարքը հին ձևի պիտի լինի, մի փութ ծանրութիւն գլխիս ցրած: Յիմար և աւելորդ բաներ են էս ամէնը. իսկ մարդս էլ դրանց հակառակ կը լինի:

Եւ Սաթկնիկը փենդային անհամբերութեամբ ու սրտապրոփ սպասում էր այն օրին, երբ զուռնան առաւօտը կանուխ իր զիւ ձայնը կը բարձրացնի Ոսկանենց փան կարին, դուրս թողնելով իր սրտի խորքերից ոգևորիչ, հոգի ալեկոծող և հարսանեաց փօնին խորհրդաւոր նշանակութիւն տւող «էհէարին»¹⁾:

III

Մի դժուար վճռելու հարց էլ կար մինչև հարսանեաց օրը, որ Ոսկանենց Թամամին այնքան անհանգստութիւն և սրտնեղութիւն պատճառեց: Տղան պահանջում էր, որ հարսի գլուխը քաղքի ձեով կապած լինի: Նրա հետ աղջկափէրը համաձայն էր. հակառակում էր միայն փղայի մայրը: Թամամը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտել այդ մտքի հետ, մանաւանդ որ իր հարսը առաջին օրինակն էր լինելու ամբողջ զիւղում: Երկար դիմադրումներից յետոյ պառաւ սփսպած եղաւ զիջել որդուն՝ փեսնելով նրա վճռականութիւնը: Սրտասուքը այս անգամ էլ չազդեց քարասիրտ փղայի վրայ:

— Վնաս չունի, որդի, ասում էր Թամամը. քո ասածով թող լինի, միայն թէ բերած հարսդ հնազանդ խիզան լինի:

¹⁾ Տասններկու միմեանց կապած պարսկական եղանակներ:

Հարսանիքը փառաւոր կերպով կատարեցին: Պառաւ թամամը այդ օրն իր երջանկութեան գագաթնակէտին էր հասել: Միայն մի անգամ նա տխրեց, երբ որդին իր նոր զգեստը հագած՝ պատրաստուեալ էր աղջկաբուն ուղեորելու: Այդ միջոցին թամամը չիշեց իր դժբախտ ամուսնուն, որը չարժանացաւ որդու ականաչ-կարմիրը: Կապելու հանդիսին, և արտասուեց: Երբեմն երբեմն թամամի մարքով անցնում էր այն, որ հարսը իր ընտրած աղջիկը չեղաւ. բաց այդ, որ ժամանակ առ ժամանակ անախորժ զգացմունք էր առաջացնում նրա մէջ, թամամը աշխատում էր հեռացնել իր գլխից, մոռանալ ամեն ինչ և ամբողջապէս նւիրել որդու ուրախութեանը: Արտաքուստ նա իրան վերին աստիճանի ուրախ և երջանիկ էր ցոյց տալիս: Ո՛րքան նա պարեց այն ժամանակ, երբ հարսն ու փեսան մականների չաղթական երգերի ուղեորութեամբ տան բակը մտան: Այնքան պարեց թամամը, որ զուռնաւիները քիչ մնաց յոգնէին: Վրուհներից զիրոզ կանայք համարեա ամենքը նկատեցին այդ և մնացին զարմացած:

— Թամամ բաջուն տեսէք է, ասում էին նրանք. — ուրախութեանը էլ չափ ու սահման չկայ: Հսւարա որ թողնես՝ մինչ իրիկուն հարսի ու տղի առաջ էգալէս պար կը գայ:


Պարեց, պարեց թամամը, վերջը մօտեցաւ հանդիսի հերոսներին, համբուրեց նրանց և ասաց.

— Ազին ձեզ մաքաղ լինի, համեցէք տուն: Ա՛յ թագաւորի մականներ, ամենքդ զոնաղ էք, համեցէք:

Թնդաց մականների խրոխտ ուռան և հանդէսը ներս մտաւ տուն

Հանդերձը վերցնելուց չնույց թամամը նորեկ հարսին կանչեց իր մօտ, նրան մի քանի խորհուրդներ տաւ և աւելացրեց, թէ մարդուդ հնազանդ լինիս: Հարսը, որ դեռ իրաւունք չէր ստացել սկեսուրից նրա հետ խօսելու, գլուխ տուց, համբուրեց նրա ձեռքը և գնաց քնելու միայն այն ժամանակ, երբ պառաւը անկողին մտաւ:

Հետեւեալ առաւօտը Սաթենիկը շատ վաղ վերկացաւ քնից, իսկոյն հագնւեց և գնաց տան բակը աւելելու: Զրի գնալու կամ



808-2018

կովերը կթելու իրաւունք դեռ չունէր. նորահարսը մի բանի օրինց չեւոյց միայն կարող է տնից ելնել:

Այդ առաւօտ Սաթենիկը իրան կորցրածի պէս էր զգում և շարունակ գտնւում էր երազների մէջ: Մեղրամանի առաջին գիշերը հանգիստ չէր տալիս նրա մոքին ու երեակայութեանը: Ամուսնական մութ վարագոյրը բարձրացել էր նրա աչքերից, տեղի տալով խորհրդաւոր տեսարանի. և հրապուրիչ գաղտնիքը լուծւել էր նրա առաջ: Սաթենիկը երբեմն ցնցւում և կարմրում էր, յիշելով այդ ամենը. ամօթի զգացմունքը պաշարում էր նրան և նա աշխարհում էր ամեն ինչ մոռացութեան տալ: Սակայն շատ յաճառ էին շտապուցիչ ցրող մոքերը և յոքա հանգիստ չէին տալիս նորահարսի բորբոքւած երեակայութեանը: Սաթենիկը ամեն ինչ կատարում էր մեքենայաբար. թէև նրա ձեռները գործում էին, բայց միպքը այլ տեղ էր պոյոյաներ գործում...

Մի առ ժամանակ նրան այդ դրութիւնից հանեց սկեսուրը, որ եկեղեցուց վերադառնալով, հարսին իր մօտ կանչեց և տարաւ տան բոլոր անկիւնների հետ ծանօթացնելու:

— Ականջումդ ամեն ինչ պինդ պահիր, եղբաւիկեց Քասամը հարսին զանազան խրատներ և պատւէրներ տալուց չեւոյց. — չսխալւես, իմ սիրտն էլ նեղացնես, քոնն էլ: Որ մոռացար, մի բան իմ ուզածով, իմ քէֆով չեղաւ, ականջներդ կ'ոլորեմ:

Քասամը վերջին խօսքերը հանաքի ձեով արտասանեց և ծիծաղեց: Նորահարսն էլ խնդաց և զլխով ու ձեռով հասկացրեց, թէ ամեն ինչ լաւ կը կատարի:

Սաթենիկը պառաւի խրատները լսում էր առանց վրդովւելու կամ զայրանալու: Սկեսուրի ասածները նրան մինչև անգամ խրախուսում էին ամենայն եռանդով նւիրւելու հարսի կոչմանը և ցոյց տալ ամենքին շնորհալի տնտեսութիւն: Սակայն նորահարսն իր հարսնութեան հէց առաջին օրերում անյաջողութեան հանդիպեց:

Մի կիրակի Քասամը պատւիրել էր Սաթենիկին մեղրով եղուձու անելու: Կէսօրւան մօտ էր, որ հարսը՝ թաւան օջախի վրայ դրած՝ եղուձու էր պատրաստում: Կարմրած իւղի ծանր հոտը տարածւել էր Ոսկանեց թաղում, և հարեան կանայք, դառնալով միմեանց, ասում էին.

— Ըհը՛, Թամամ բաջին եղուձու է անել իսկիս. երևի ուզում է հարսի մատներին շնորհքը փորձել։ Համ էլ դէ քէ՛Քի մէջ է. իղան եկած, Թազա հարսը յանը...

Օջախի առաջ դրած էր մի ձենապակէ պնակ, որից մի դիւ-
թին Գէորգն էր բերել իր հետ։ Հարսը եղուձուն դրա մէջ պիտի
սեղան բերէր։ Սաթենիկը մի րոպէով սենեակ մտաւ՝ սկսուրից մեղր
ուզելու։ Թամամը բարձրացաւ նստած տեղից, բացեց սենեակի
պատում Թողած փոքրիկ պահարանը, իր ձեռքով կճուճից մեղր
հանեց, մի սկաւառակի մէջ դնելով տաւ հարսին և պահարանը
նորից կողպեց։ Սաթենիկը մեղրով սկաւառակը ձեռին դնաց դէպի
օջախը։ Նրա բացակայութիւնից օգուելով՝ մի հաւ բարձրացել էր
օջախը և կրցահարում էր ձւի կճեպները։ Նկատելով Սաթենիկի մօ-
տենալը՝ հաւը իրան կորցրեց, Թռչկոտեց դէս ու դէն, Թըրպըրտաց
և վաչր ձգեց ձենապակէ պնակը։ Հաւը փախաւ, բայց ամանը փշրեց
և չրխոցը հասաւ պառաւ Թամամի ականջին։

— Էս ի՞նչ էր, գոչեց նա սարսափահար և վեր Թռաւ տեղից։

— Անտէր մնաս դու, ա՛յ հաւ, բացականչեց Սաթենիկը կամա-
ցուկ, յուզած և ղողզոջուն ձայնով։— քո տէրը մեռնի...

Նա բնազդօրէն սկսեց ժողովել պնակի կորրները, կարծելով,
Թէ կարող է կորուստը ետ դարձնել։

— Էս ի՞նչ է, գոչեց սկսուրը սարսափած՝ մօտենալով հար-
սին։— քո ձեռները չորանան... Աղջի, ի՛նչու զգոյշ չես վարւում։
պա քեզ ի՛նչ եմ ասել։ Վա՛շ, վա՛շ... Կորաւ, ջուրն ընկաւ գնաց...

Հարսը ձեռով-գլխով հասկացրեց, Թէ հաւը արաւ։

— Հաւի տէրը մեռնի, քո էլ... Ի՛նչ էր եկել բերանս հաւ...
Աղջի, պա հաւը էստեղ ի՛նչ է անում։

Հարսը ձւի կճեպները ցոյց տւեց, կամենալով հասկացնել, Թէ
հաւը կճեպները քրքրում էր։

— Աղու ¹⁾ զառնայ էդ եղուձուն... Աղջի, մի շաբաթեայ
հարս ես, որ էսպէս փորձանք ես բերում մեր գլուխը, պա յետոյ
քո ճարը ի՛նչ է լինելու. ձեռքիցդ բան չի պրծնիլ... Մի դիւթին
էր, հիմա մնաց տասն և մէկ հատ... վա՛շ...

¹⁾ Թռչն։

Թամամը կոացաւ, ամանի կտորտանքներէից մի քանիսը վերցրեց, ափսոսանքով դէս ու դէն շրջեց ու շարունակեց.

— Զեռներդ չորանան. պա էս աչքի լոյսի նման ամանը վերընկնի կտորւի... Հեռու կաց տեսնեմ... Գնա մի ուրիշ աման բեր...

Սկեսրի իւրաքանչիւր խօսքը թունաւոր նետի պէս խոցում էր նորահարսի մատաղ սիրտը: Ի՞նչ անէր Սաթենիկը. ի՞նչպէս արդարացնէր իրան. լեզու չկար: Նա կարմրում էր, համբերութեամբ տանելով վրդովմունքի և վիրաւորւած ինքնասիրութեան ամբողջ ծանրութիւնը: Ի՞նչու նա այդպէս անզգոյշ եղաւ, կճեպները դէն չշարտեց, ամանը սկզբից մի այլ տեղ չդրաւ: Ի՞նչու բակի դուռը չէր փակել, որ հաւը ներս չմտնէր: Այսպէս թէ այնպէս, բաց դա մի անսպասելի և պարահական դիպւած էր, որի մէջ ինքը մեղք չունէր. մի՞թէ նա այդպիսով արժանի էր սկեսրի խիստ և վիրաւորիչ յանդիմանութիւններին:

Սաթենիկը այլապէս աւելի սենեակ մտաւ և մի այլ աման բերաւ: Թամամը դեռ շարունակում էր իր ական ու վախը և նախադիմանքները: Եւ այդ ամենը... մի պնակի համար:

Որդին տուն եկաւ ճաշելու: Մայրը բարկացած իսկոյն յայտնեց նրան դժբախտ դէպքը և սկսեց որդու առաջ ևս նախատել հարսին:

— Մարդն ես, այ որդի, դու էլ խրատիր, որ զգոյշ լինի, խելօք, կարդին շարժւի:

— Այ ազի, մի՞թէ արժէ մի ամանի համար սիրտ նեղացնել: Կը գնամ արտութիւն, էլի կը բերեմ՝ ինչքան և ինչ տեսակի որ ուզես, ի՞նչու ես սիրտդ նեղացնում, հարսի սիրտն էլ կտորում: Դէ առանց քո ասելու էլ նա տխրած կը լինի. դու էլ որ ասում ես՝ նրա ցաւը կրկնապատկւում է. լաւ չի:

— Դէհ, դու էլ որ հիմիկանից հեղպէս խօսացիր, պրծաւ գնաց. երանի ինձ էլի... Այ դադ, պա որ դու իմ երեսին կնկանդ մօտ հեղպէս ես խօսում, նրան թեւերիդ տալն ես առնում, պա էն հարսը էլ ինձ կը լսի, կը նայի, որ ի՞նչ...

— Լաւ, հերիք է, ասաց Գեորգը կտրակի, սրտնեղութիւն մի գցիր. հաց բերէք ուտենք:

—Մին էլ առում եմ. միւս անգամ իմ առաջ էդպէս բան չսես կնկանդ համար:

Սեղանը փռեցին և հացի կացան: Մայր ու որդի միասին էին ծաշում: Հարսը իր երեսը դարձրել էր յօան մեծից և ծաշում էր առանձին: Սկեսուրի հետ նա դեռ անխօս էր և ուրեմն նրա հետ սեղան նստելու իրաւունք չունէր դեռ:

Հարսը ծաշին քիչ կերաւ: Նրա ակորոթակը չքացել էր. այնքան սաստիկ էր նրա հոգեկան յուզմունքը: Սկեսրի խիստ, կոպիտ և ցուրտ չանդիմանութիւնները միաբանջութեան էին ենթարկել ջահիլ հարսին. արդեօք սկեսուրը միշտ այդպէս էր վարւելու նրա հետ:

Ամուսինը նկատեց կնոջ յիսրութիւնը և մօր բացակայութեան ժամանակ ասաց.

—Շատ միտք մի անիլ: Պառաւ կնիկ է. ասածներին ուշք մի դարձնիլ:

Քամամի ցաւն ու դարդն էլ այն միտքն էր, թէ արդեօք հարսի կտրարած սխալը պատահական և բացառիկ դէպք էր, թէ դեռ էլի կրկնւելու էր:

Չարաբատարիկ դէպքը նրան կրկին անգամ համոզեց, որ հարսը, որին ինքը չէ հաւանել ու ընտրել, իր համար ցաւ ու կրակ է դառնալու:

Մի անգամ երեկոյեան դէմ Սաթենիկը ջրի էր գնացել: Աղբիւրից վերադառնալուց գիւղամիջի գլխին նա պատահեց իր մօրը, որ ջրի էր գնում: Նրանք կանգ առան և մայր ու աղջիկ զրոյցի կացան: Մայրը հարցնում էր աղջկանից, թէ արդեօք նա ինչպէս է զգում իրան մարդու ստանը, սկեսուրն ու ամուսինը ինչպէս են վարւում հետը: Սաթենիկը գոհ էր ամուսնուց, բայց դժգոհ սկեսրից: Նա պարմեց մօրը պնակի դէպքը: Մայրը խրատեց նրան զրոյշ լինել և սկեսուրին լսել: Այդպէս նոքա զրուցում էին, իսկ Քամամը համբերութիւնը հալած՝ սպասում էր հարսին, որ ջուր բերէ և սամաւարը կրակ դնէ:

—Չեկաւ, զանդաւուրում էր ինքն իրան Քամամը, — չեկաւ, ետրաբ ինչ դառաւ էս հարսը, ուր կոպրւեց՝ մնաց ճանապարհին: Պա հարսը ջրի գնաց էսքան կուշանայ:

Թամամը համբերութիւնից ելաւ և սկսեց իր բարկութիւնը որդու վրա թափել:

—Այ ազի, ախր իզուր ես նեղացնում սիրտդ, դէ երեւի մի բան կայ, որ էսպէս քիչ ուշացել է. կէս գիշեր խօսմ չի կտրել: Ժամի զանգակները հիմիկս տեսցին:

—Ասում ես էլի, պա ես հիմա ինչպէս ժամ գնամ. հարսս որ տանը լինէր, կը գնայի:

—Ժամ ես ուզում—գնա. հրէս ես տանն եմ. ի՞նչ կը դառնայ, որ տունդ առանց կնիկ թողնես գնաս:

—Պա կը լինի, պա դա լսւած բան է: Ի՞նչու ախր. ջրի գնացիր, իսկոյն ետ եկ:

Եւ դուրս եկաւ սենեակից: Թամամը բարձրացաւ տան կտուրը և, դառնալով իր հարեանուհու աղջկան՝ Սոնային, որ ջրարեղից նոր էր վերադարձել, հարցրեց.

—Սոնա, մեր հարսը ի՞նչ դառաւ. չեկաւ մինչև հիմա. ախր քեզ հետ միասին գնաց:

—Գիւղամիջի գլխին մօր հետ խօսում էր: Շուտով կը գայ:

Ոչինչ չասաց աչլ ևս Թամամը: Նա իր բուռը բերանին տալաւ և լի կատաղութեամբ իջաւ ներքեւ:

Այդ բոպէին կու ժը շալակն առած և հեալով բակ մտաւ Սոթենիկը: Իմանալով սկեսրի բնաւորութիւնը՝ նա շատ արագաքայլ էր անցել ճանապարհը, որպէս զի իր ուշանալը աննկատելի դարձնի: Հարսի թշերը վարդեր էին դարձել, իսկ սևորակ աչքերը այրւում էին կրակի պէս: Երեսին խաղում էր մի մեղմ ժպիտ:

—Աղջի, դու ի՞նչ դառար, գոչեց նրա վրայ սկեսուրը բարկացած, — ջահիլ հարսը գիւղամիջում կը կանգնի կը խօսի, էդքան էլ համարձակութիւն... Թո՛ւ... Աղջի, պա դու գետինը չես մըլտնում. ի՞նչ կասեն տեսնողները: Մին էլ որ էդպէս բան պատահի, կաշիդ գլխովդ կը հանեմ, լսեցի՞ր:

Եւ քոշերը հագնելով՝ շտապեց դէպի եկեղեցի:

Սաթենիկը ոչինչ չկարողացաւ պատասխանել. անխօս էր զեւ: Մեղմ ժպիտը իսկոյն չքացաւ նրա երեսից: Տխրութեան քողը իջաւ, ծածկեց նրա դէմքը, աչքերը արտասուակալեցին և նա, դառնալով ամուսնուն, լաղալու մած ասաց.

—Մինչև երբ էսպէս մնամ. մի բան է ասում չեմ կտրողանում պարասխան տամ. ինձ իզուր տեղից նախադում է, չեմ կտրողանում երկու խօսք ասել, որ իմ անմեղուծիւնը նրան ցոյց տամ, կամ հասկացնեմ, որ ինքը անարդար է խօսում: Մինչև երբ. մի ամուսն հարս եմ. հերիք չէ որքան անխօս մնացի: Դու էլ չես պահանջում, որ մայրդ ինձ խօսցնի:

Սաթենիկը խոնարհեց իր գլուխը. դառնաշունչ հեկեկանքը խեղդեց նրա ձայնը: Ամուսինը գուրգուրեց, քաջալերեց մաքաղ կնոջը և խոստացաւ, թէ մօրը կը խնդրէ, որ հարսին անպարճառ խօսցնէ:

—Անխելք սովորութիւն է, ի հարկէ, ասաց Քհորզը, բայց միանգամից չի կարելի վերացնել, սիրելիս. հարկաւոր է կամաց-կամաց: Փոքր էլ համբերիր: Ես նոյն իսկ մորազիր էի, որ մեր տուն եկած հէնց առաջին օրը պահանջեմ մօրիցս, որ քեզ խօսեցնի. բայց անկարելի էր յանկարծ: Իսկ դու էլ մի՛ վհարկիր:

(Վերջը լաջորդ թուով)